մարդկային էության, մենք ողբում ենք մեզ համար սիրելի այս մարդու մահը: Եվ անա այժմ մեծ վիշտ և անսփոփելի թախիծ են վերապրում Հայ Եկեղեցու հոգևորականությունը և հավատացյալները, որոնք եկել են իրենց հարգանքը տալու իրենց ամենասիրելի, իմաստուն Հայրապետին:

Հայ Եկեղեցու վիշտը լիովին բաժանում են ինչպես բոլոր եկեղեցիները, այնպես և Ռուս Ուղղափառ Եկեղեցին, և ես լիազորված եմ այդ Եկեղեցու, և Նրա Պետ՝ Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի անունից խոր ցավակցություն հայտնելու Հայ Եկեղեցու հոգևորականությանը և հավատացյալներին՝ նրանց հասած մեծ վշտի առթիվ: Ռուս Ուղղափառ մեր Եկեղեցին միշտ էլ խորապես հարգել է Սրբազնագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ին, որպես ականավոր եկեղեցական գործչի: Մեր Եկեղեցին ողբում է Նրան, որպես իր մեծ և անկեղծ բարեկամի: Հանգուցյալը խիստ հետաքրքրվում էր մեր Ռուս Ուղղափառ Եկեղեցու կյանքով, հաճախ Նրան տեսնում էինք մեր հյուրընկալ Մոսկվայում, Նա շատ հաճախ հյուր է եղել և մեր Պատրիարք Ալեքսիի մոտ, որի հետ ամենասերտ բարեկամական կապեր էր պահպանում: Նորին Վեհափառություն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը մեր Ռուս Ուղղափառ Եկեղեցուն մեծ վիշտ պատճառեց նաև այն պատճառով, որ հանձին Հանգուցյալի մենք կորցրինք մեր Հայրենիքի մեծ հայրենասեր: Բոլորին հայտնի է Նրա հայրենասիրական երախտիքը Հայրենական երկրորդ պատերազմի ժամանակ, մեր Հայրենիքի համար այդ ծանր տարիներին: Նա Իր քարոզներով և գրություններով անդադար կոչ էր անում աշխարհի Իր հավատացյալ զավակներին՝ պաշտպանելու Հայրենիքը գերմանական ֆաշիստներից: Նա ջերմագին աղոթքներ էր վերառաքում առ Աստված՝ պարգևելու հաղթանակ մեր քաջարի բանակին և Իր հոգևոր հոտի մեջ ճշմարտության վերջնական հաղթության հավատ ներշնչում չարի դեմ:

Հանգուցյալ Պատրիարք-Կաթողիկոսը առանձնապես բանկ էր Ռուս Ուղղափառ Եկեղեցու համար որպես քրիստոնեական մեծ իդեալների— խաղաղության և սիրո— անխոնջ մարտիկ: Նա խաղաղության պաշտպանության մեր կոնֆերենցիաների մասնակիցն էր: Նա կանգնած էր խաղաղության պաշտպանների առաջին շարքերում, խաղաղության վերաբերյալ Նրա բարձր, հեղինակավոր խոսքը լսում էին ամբողջ աշխարհի բարի մարդիկ:

Հայ Եկեղեցու բանկագին հայրե՛ր և եղբայրնե՛ր, անհուն վշտով Դուք այժմ շրջապատել եք Ձեր սիրելի Եպիսկոպոսապետի բանկագին անյունը: Մանր է հրաժեշտը Նրա հետ, բայց Դուք հաստատապես հավատացեք, որ Ձեր սիրելի Վեհափառ Հայրը, որը խզել է երկրային կապերը Ձեզ հետ և փակել շրթները քարոզի և աղոթքի համար, Իր հոգևոր շրթներով Ձեր մասին կրարբառի Ամենաբարձրյալին երկնային այն սիրո լեզվով, որի ընտրյալ անոթն էր Նա: Եվ ես հավատում եմ, որ այս ակնկալությունը չի ամաչեցնի Ձեզ: Որպես երաշխիք կարող է ծառայել Հանգուցյալի ողջ կյանքը, որը պատանեկան օրից սկսած լի է եղել սիրով և հեզությամբ:

Վեհափառ Հայրապե՛տ, Քո պայծառ անունը հավետ կապրի հայ ժողովրդի և Քո բազմաթիվ բարեկամների հիշողության մեջ: Ռուս Ուղղափառ Եկեղեցու և մեր Սրբազնագույն Հայրապետ Պատրիարք Ալեքսիի կողմից ընդունի՛ր Դու, ո՞վ Սրբազնագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նրա վերջին համբույրը. ամեն:

ԴԻՄԻՏՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Վրաց Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ)

ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՇՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի և Նրան վստահված Վրաց Ուղղափառ Եկեղեցու թեմերի անունից հայտնում ենք մեր խորին ցավակցությունը ինչպես հոգևոր հոտին, այնպես էլ վշտակիր հոգևորականությանը՝ երջանկահիշատակ Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Խիստ դառն է և ծանր Հայ որբացյալ Եկեղեցուն հասած կորուստը, և այդ վիշտը Նրա հետ ամբողջովին կիսում է ո՛չ միայն հարևանությամբ, այլև ազգակցությամբ ամենամերձավոր Վրաց Եկեղեցին, որի հետ Հանգուցյալը ամենասերտ եղբայրական հարաբերություններ էր հաստատել: Նա միշտ, ինչպես Հայ Եկեղեցու համար էր, հանդիսանում էր և մեր բարեկամը, մեր սի-

ռալիր Հայրը: Մենք Նրան ճանաչում էինք որպես մեծ ուսուցչի: Ռուս և Վրաց Եկեղեցիների հանրագումար հոգևոր ժողովներում Հանգուցյալը հանդես էր գալիս մարդասիրությամբ տոգորված խիստ սրտառուչ խոսքերով՝ հանուն ամբողջ աշխարհում խաղաղության հաստատման: Բարձր ուսումը, մարդասիրությունը, մտքի սրաթափանցությունը— սրանք Հանգուցյալի հանրածանոթ գծերն ու հատկությունն էին: Եվ Հանգուցյալի այս բարձր ու առաքինի հատկություններն առանձնապես արտահայտվեցին Իր հոգևոր հոտի երկարամյա իմաստուն ղեկավարման ընթացքում: Նա ո՛չ միայն պահպանեց, այլև է՛լ ավելի բարձրացրեց եկեղեցական և հոգևոր կրթության մակարդակը՝ կրթական բարձր օջախով՝ հանձին Հայ Եկեղեցու Հոգևոր Ճեմարանի, որի անմիջական ղեկավարն ու ոգեշնչողն էր Ինքը՝ հանգուցյալ Պատրիարք Գեորգ Զ.ը: Նա ո՛չ միայն աստվածաբանական բարձր կրթության, այլև բազմակողմանիորեն մեծ զարգացման տեր մի անձնավորություն էր: Հանգուցյալի հատուկ երախտիքն է հանդիսանում Նրա այն գործունեությունը, որ ուղղված էր պետությունների միջև նոր հարաբերություններ սանմանելուն: Այդ գործում Նա ընթանում էր Ռուս և Վրաց Եկեղեցիների հետ ձեռք-ձեռքի տված: Նա ջերմագին դրդում էր Իր հավատացյալ զավակներին՝ հավատով և նշմարտությամբ ծառայելու Աստուծով սանմանված իշխանությանը և սիրելի Հայրենիքին: Անկեղծ գոհունակության հատուկ զգացմունքով Հանգուցյալը գիտակցում էր, որ մեր կառավարության գլխավոր հոգսն է ո՛չ միայն ժողովրդի նյութական բարեկեցությունը, այլ ձգտումը ամբողջ աշխարհում սարածելու և իրականացնելու քրիստոնեական բարոյախոսության այն բարձր բարոյական սկզբունքները, ինչպիսիք են՝ խաղաղություն, միասնականություն, սեր և եղբայրություն, որ այնքան մեծ պատվով արդեն իրականացել է մեր անծայրածիր, բազմազգ պետության մեջ:

Դո՛ւք, հարգարժան հայրե՛ր և եղբայրնե՛ր, որ եկել եք թե՛ մեր անծայրածիր Հայրենիքի տարբեր վայրերից և թե՛ անդրասահմանյան հեռավոր երկրներից՝ Ձեր վերջին հարգանքը մատուցելու Հանգուցյալին և բոլոր այստեղ հավաքվածքնե՛ր, որ հատուկ վրշտով և տրտմությամբ ուղեկցում ենք սիրելի Հայրապետի նշխարները մինչև Նրա խաղա-

ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԴԻՄԻՏՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ է ԿԱՐԴՈՒՄ

ղության ու հանգստի վերջին վայրը, թո՛ղ մեզ համար համոզմունք դառնա այն վստահությունը, որ Գեորգ Զ.ի պայծառ անունը ոսկե տառերով է գրվում Հայ բազմաչարչար Եկեղեցու բազմադարյան պատմության էջերում: Թո՛ղ Ձեզ մխիթարի նաև այն համոզմունքը, որ Արարիչն Աստված հայ պանծալի ազգի միջից երևան կհանի արժանավոր Տեղակալ և Գահակալ:

Թո՛ղ հավերժ լինի Իր ազգի և հարազատ Եկեղեցու այս պանծալի զավակի հիշատակը. ամեն:

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՓԱՅԱՆ

(Առաջնորդական տեղապահ Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի)

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏԸ

«Ոչխարք իմ ձայնի իմում լսեն և ես ճանաչեմ զնոսա և զկնի իմ գան»:

(ՀՈՎՀ., Ժ 27)

Վշտակից սրբազա՛ն եղբայրներ և սգակի՛ր ժողովուրդ.

Մանր և անպատում եղավ մեր վիշտը, երբ Մայր Արոռեն հասավ մահագույժ հեռագիրը: Չկա՞ր այլևս մեր հոգևոր Հայրը և մեր Ս. Եկեղեցվո մեծ Հովիվը, ու սուգի մեջ էին Իր որդիները, թե՛ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեջ:

Խոր եղավ նաև ցնցումը՝ մեր հոգիեն ներս ու սուգը պատեց նաև մեր հուզված սիրտը:

Եվ անմիջապես որոշեցինք փութալ Մայր Աթոռ՝ բաժնելու համար Ձեր վիշտը և մասնակցելու համար վերջին հարգանքին, որ պիտի ընկերանա Անոր անշնչացած մարմինին մինչև Իր վերջին կայանը:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՓԱՅԱՆԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ է ԿԱՐԴՈՒՄ

Հանուն Ամերիկայի հայրենակարոտ հայոց, Եկեղեցվո հովիվներուն, պաշտոնական մարմիններուն և ժողովուրդին, թող ներվի այժմ մի քանի բառերու մեջ ամփոփել և ըսել մեր հիացումին անամփոփելի մեծությունը և մեր